ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

«27» մարտի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. Այունց

ԳԲԽ-32/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 17.03.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 17.03.2017թ. ներկայացված բողոքով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ մասնակցել է «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման

նպատակով հայտարարված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին և գնահատող հանձնաժողովի որոշմամբ զբաղեցրել է երկրորդ տեղ, իսկ առաջին տեղը զբաղեցրել է «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ն: Այնուհետև, ուսումնասիրելով «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնի դարձավ, որ հայտի փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն բողոքով դիմեց ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետև՝ Խորհուրդ): Խորհուրդը որոշում կայացրեց դադարեցնել գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին: «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ն հայցով դիմեց դատարան՝ Խորհրդի վերը նշված որոշումը չեղյալ ճանաչելու պահանջով, որը սակայն դատարանի վճռով ամբողջությամբ մերժվեց: 30.12.2016թ. «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատվեց բավարար և որոշում կայացվեց ընտրված մասնակից ճանաչել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին: «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերի համաձայն պայմանագիրը պետք է կնքվեր 10 օրացույցային օր հետո՝ 10.01.2017թ.-ին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը այդպես էլ հաղթող ճանաչված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հետ ապօրինի կերպով պայմանագիր չկնքեց: Ավելին՝ հաղթող ճանաչված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու փոխարեն, ցուցաբերելով կամայականություն և խախտելով Հայաստանի Հանրապետությունում գործող գնումների գործընթացը կարգավորող օրենքների և իրավական ակտերի պահանջները՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի բանակցային ընթացակարգի հանձնաժողովի 2017թ. մարտի 9-ի թիվ 1 որոշմամբ՝ արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հրապարակվել է հայտարարություն՝ նույն գնման առարկայի՝ Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՔՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով բանակցային ընթացակարգով նոր ընթացակարգ հայտարարելու մասին:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բողոքի փաստաթղթի և իրավական հիմք, ապացույց նշել է հետևյալը.

 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացույցային օրվա ընթացքում

պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է համարվում, եթե՝

1.Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին

2. Դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը

3. Ոչ մի հայտ չի ներկայացվել

4. Պայմանագիր չի կնքվում:

Տվյալ դեպքում չի կարող խոսք լինել գնման պահանջի գոյությունը դադարելու մասին, քանի որ «ՀՀ ՔՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով բանակցային ընթացակարգով նոր ընթացակարգի հայտարարությունն արդեն իսկ խոսում է գնման պահանջի գոյության մասին:

 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 543 հոդվածի համաձայն՝ պետական պայմանագիրը պետք է կնքվի ընթացակարգն անցկացնելուց ոչ ուշ, քան քսանօրյա ժամկետում:

Եթե կողմը, որի համար պետական պայմանագիր կնքելը պարտադիր է, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ այդ կողմին պետական պայամանգիր կնքելուն պարտադրելու պահանջով:

Ընդ որում, նման պահանջով արդեն իսկ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկեու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Բացի այդ, խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3րդ, 6-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 8-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասին պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ և 49-րդ հոդվածներով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ–ն խնդրել է.

Դադարեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի բանակցային ընթացակարգի հանձնաժողովի 2017 թվականի մարտի 9-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված հայտարարությունը՝ արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով Երևանի թիվ 191 դպրոցի

վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՔՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով բանակցային ընթացակարգով նոր մրցույթ հայտարարելու մասին:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների համար հայտարարված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9 ծածկագրով ընթացակարգը չեղյալ հայտարարված լինելու դեպքում դադարեցնել ցանկացած այդպիսի որոշում:

Որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի բանակցային ընթացակարգի հանձնաժողովի 2017 թվականի մարտի 9-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված հայտարարությունը՝ արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՔՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով բանակցային ընթացակարգով նոր մրցույթ հայտարարելու մասին որոշումը, տվյալ ծածկագրով գնման ողջ գործընթացը, ինչպես նաև հայտերի ընդունման և բացման գործընթացը:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 23.03.2017թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 17.03.2017թ. ներկայացված բողոքը:

<u>2. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Կենտրոնը 21.03.2017թ. թիվ 02/04.1/1063-17 գրությամբ դիմել Պատվիրատուին, խնդրելով՝ կարծիք ներկայացնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 17.03.2017թ. ներկայացված բողոքի վերաբերյալ, սակայն Պատվիրատուն Կենտրոնին չի ներկայացրել բողոքի վերաբերյալ իր դիրքորոշումը:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

Ընկերությունը 17.03.2017թ. գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է բողոք, սակայն 23.03.2017թ. գրությամբ խնդրել է ***առանց քննության թողնել 17.03.2017թ. բողոքը:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը Խորհրդին ուղղված 27.03.2017թ. եզրակացությամբ առաջարկում է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 17.03.2017թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ 32/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Տ. Գևորգյան